## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<29>> հուլիսի 2021թ.                                                  N ՄՌ 331 - 2021

ք. Արմավիր

**<<ՓԱՐԱՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2021 թվականի հունիսի 30-ի N 02/09.2/14270-2021 գրությունը և Արմենուհի Տեր-Խաչատրյանի 2021 թվականի հուլիսի 28-ի դիմումը.

ո ր ո շ ու մ   ե մ՝

1. <<Փարաքարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմենուհի Տեր-Խաչատրյանին տրամադրել 2020 թվականի ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2021 թվականի օգոստոսի 6-ից 27-ը ներառյալ՝ 16 աշխատանքային օր տևողությամբ:
2. Արմենուհի Տեր-Խաչատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Փարաքարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Փարաքարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական գծով տնօրենի տեղակալ Երանուհի Գրիգորյանին:
3. Արմենուհի Տեր-Խաչատրյանին աշխատանքի մեջ համարել 2021 թվականի օգոստոսի 30-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ                                                  Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 29.07.2021 14:20:49 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230